ԳՐԻԳՈՐ ԱՍԱՏՐՅԱՆ. Հումանիզմը նոր հազարամյակի հիմնախնդիրների համատեքստում, *Երևան, «Գիտություն» հրատ., 2014, 460 էջ:*

Լույս է տեսել փիլիսոփայական գիտությունների թեկնածու, Հումանիզմի պրոբլեմների ակադեմիայի նախագահ, խորհրդահայ շրջանի պետական-հասարակական հայտնի գործիչ Գրիգոր Ասատրյանի տքնաջան աշխատանքի արդյունքում ստեղծված «Հումանիզմը նոր հազարամյակի հիմնախնդիրների համատեքստում» աշխատությունը: Այն գնահատվում ու արժևորվում է մի քանի տեսանկյունից.



առաջին. *հումանիզմի վերաբերյալ գիտական գրականությունն աղքատիկ է, իսկ եղածներն էլ շոշափում են այդ բարդ ու բազմաշերտ խնդրի առանձին կողմերն ու տեսանկյունները միայն, մինչդեռ մենագրության մեջ հումանիզմի փիլիսոփայությունը մատուցվում է իր ամբողջության մեջ՝ նրանում առկա բոլոր ուղղություններով և իր պատմական զարգացման ողջ ելևէջներով:*

Երկրորդ. *լոկալ կոնֆլիկտների և ռազմաքաղաքական զարգացումների այս բուռն ժամանակաշրջանում, երբ ժողովրդավարական արժեքների տարածման քողի տակ երևան են գալիս հումանիզմի գաղափարախոսությանն անհարիր երևույթներ, մինչդեռ իրականում* չկա ժողովրդավարություն առանց հումանիզմի, *այս աշխատությունը նպաստում է ընդհանրացման հասցնելու այն հայեցակետը, որ* հումանիզմը պետք է լինի միջպետական, միջազգային, միջհասարակական և միջանձնային հարաբերությունների հիմքը և նրա առկայությունն ուղիղ համեմատական է խաղաղությանն ու համընդհանուր սիրուն:

Երրորդ. *մենագրության մեջ հումանիզմը ներկայացվում է որպես աշխարհայացքային հիմնարար սկզբունք, տեսական փիլիսոփայության կարևորագույն կատեգորիա:*

Փորձենք այս ամենում համոզվել աշխատության հանգամանալից քննությամբ: Գրքի հենց վերնագիրը վկայում է, որ հումանիզմը որպես հանգուցային փիլիսոփայական կատեգորիա, եթե հասնի խորն ըմբռնողունակության, ամենալուրջ դերակատարներից մեկը կարող է դառնալ նոր հազարամյակում մարդկության առջև ծառացած խնդիրների լուծման համար: Հեղինակը դա կարողանում է ապացուցել՝ բացելով այդ գաղափարախոսության բոլոր ծալքերը և՛ պատմական զարգաց-

ման առանձին փուլերում, և՛ ժամանակակից քաղաքական, տնտեսական, սոցիալական տարբեր իրավիճակների ետնախորքի վրա:

Ուսումնասիրության առաջին գլխում Գր. Ասատրյանը որպես հետազոտող խորասուզվում է արդի հումանիզմի ակունքների մեջ, որով, փաստորեն, մատնանշում է նրա ձևավորման ու զարգացման պատմական ճանապարհը՝ նպաստելով արդի համաշխարհային հումանիստական շարժման էության, գաղափարախոսության առավել հագեցված ընկալմանը: Եվ դա կատարում է այն հիմնավորվող համոզմամբ, որ «Մարդու և մարդկայինի դրվատումը, մարդկային անհատի բարձր գնահատականը, մարդկանց երջանկացնելու առաքինի երազանքն ունեն բազմադարյան պատմություն և իրենց կենդանի արտացոլումն են գտել պատմական բոլոր ժամանակների ու բոլոր ժողովուրդների հոգևոր ստեղծագործության, պատմականորեն առաջադիմական դասակարգերի ու սոցիալական խմբերի գաղափարախոսության մեջ» (էջ 37):

Դրվատելի է, որ հեղինակն անդրադարձ է կատարում հայ մարդասիրական մտքի պատմությանը՝ հեթանոսական շրջանի էպիկական ստեղծագործություններից մինչև «Սասունցի Դավիթ» էպոսը՝ մատուցելով այն վեհն ու մարդկայինը, որոնք խտացված են դրանց հերոսների կերպարներում, մարդկային էության կատարելության և դրա իրականացմանը խանգարող պատճառների որոնումներում: Ողբերգակ դարձած Նարեկացու իմաստասիրությունն է խտացված մատուցում, որոնց կարևորությունը գնահատել է հենց այսօրվա գորշ իրավիճակի (ինչը կարող է ռոմանտիկ հնչել) փոխակերպման տեսակետից: Մարդը, ասես, չի ցանկանում վեր բարձրանալ մերօրյա պրոզայիկ իրականությունից, գոնե չի փորձում նմանվել կատարելության մարմնացում հանդիսացող Աստծուն, ահա թե որն է մեր օրերի մեծ ողբերգությունը: Այս հայեցակետին է հակվել մղում Գր. Ասատրյանը, և որը գնալով ավելի է հիմնավորվում ընթերցողի մեջ, երբ նա խորությամբ ծանոթանում է Վերածննդի դարաշրջանի, ուտոպիական, XVIII դարի ֆրանսիական լուսավորիչների հումանիզմին, հումանիզմի պրոբլեմին գերմանական դասական փիլիսոփայության մեջ, նաև ռուս հեղափոխական-դեմոկրատների ու մարքսիստական հումանիզմին:

Նկատենք, որ հումանիզմի այս բոլոր տարատեսակների առումով Գր. Ասատրյանի մշակած հայեցակետերի վերհանումն ու գնահատումը մեր գրախոսականի նպատակներից դուրս է: Պարզապես կուզենայինք շեշտել, որ դրանց՝ հեղինակի կատարած անդրադարձներում արտացոլվում է իսկական գիտնականի դիմանկարը, որը մաքուր և անապական է լինում միայն մեկ դեպքում, երբ իր գնահատականների հիմքում չի դնում քաղաքական կողմնորոշումները, կրոնական աշխարհայացքները, քաղաքական զարգացումներով պայմանավորված մեր-

ժելի համարվող գաղափարախոսությունների նկատմամբ ժխտողական կեցվածքը, այլ՝ ճշմարտության որոնումն ու գտնումը այնքանով, որքանով դրա հնարավորությունը տալիս է բնության ընձեռած բանականության սահմանը: Այս առումով Բավական է նշել ժամանակին որպես անհանդուրժելի այլադավանություն կամ հերձված ճանաչված թոնդրակյան գաղափարախոսության մեջ հումանիզմի որոնումն ու գտնումը, մարքսիստական հումանիզմի ըստ արժանավույն գնահատումը հեղինակի կողմից:

Հումանիզմի փիլիսոփայությունը ներկայացվող գրքում դրսևորվում է համակողմանի, իր բոլոր տարատեսակների համադրական քննությամբ, և դրանց առավել կամ քիչ համոզիչ լինելու հանգամանքը չի նսեմացնում ընդհանուր գաղափարախոսությունը, քանզի ծնունդը, ընթացքը և հասունությունը, որը եթե մասնավորապես վերաբերում է լավին, գնահատելի տարրեր ունի զարգացման այս երեք փուլերից յուրաքանչյուրի համար: Հասունությանը բազում ոլորտներում և մարդկային կյանքում ու, ինչու ոչ, նաև տարբեր տեսություններում և գաղափարախոսություններում հաջորդում է մահը: Բայց հումանիզմի պարագայում այդպես չէ, քանի որ պատմական զարգացման տարբեր փուլեր ապրելով, այն չի կորցրել իր արդիական շունչը և հասունանալով շարունակում է ապրել ու կապրի այնքան, որքան կա մարդկությունը:

*Այս ճշմարտությունն ապացուցվում է հեղինակի աշխատության երրորդ գլխի նյութով, որը կրում է «Արդի համաշխարհային հումանիստական շարժումը» խորագիրը, և որտեղ այդ շարժումը ներկայացվում է պարբերացված՝ զարգացման առանձին փուլերի ունեցած առանձնահատկություններով: Վերլուծելով, այսպես կոչված, «հումանիստական մանիֆեստները», ինչպես նաև «Աշխարհիկ հումանիզմի դեկլարացիան»՝ նա լուսաբանում է դրանց հեղինակների փիլիսոփայական հայացքները՝ հընթացս մատուցելով սեփական փիլիսոփայական ընդհանրացումները: Հեղինակը ընթերցողին այն համոզմունքին է հանգեցնում, որ հումանիզմի գաղափարախոսները մարդկության առջև ծառացած բոլոր հիմնախնդիրների լուծման համար ունեն իրենց յուրօրինակ տեսական առաջարկները, որոնց ընդունելության անհրաժեշտության ըմբռնման մեջ է մարդկության փրկության բանալին: Այստեղից էլ՝ միանգամայն ճշմարիտ է ասված՝ «…*հասարակության գլխավոր կոչումն է՝ պաշտպանել այն, ինչ մարդկանց միավորում է, և ոչ թե այն, ինչ բաժանում է նրանց» *(էջ 208):*

Գր. Ասատրյանն անդրադառնում է նաև արդի հումանիստական շարժմանը Ռուսաստանում ու Հայաստանում (ուր հումանիզմի գաղափարախոսության և այն կյանքի կոչելու ձգտումների մեջ ամենաշահագրգիռ կազմակերպության՝ Հումանիզմի պրոբլեմների ակադեմիայի ստեղծման մեջ գրքի հեղինակը ամենամեծ ներդրումն ունի), կարևոր

տեղեկություններ տալիս այդ շարժման որդեգրած նպատակների և գործունեության ուղղությունների մասին:

Հետաքրքիր են նաև փոքրիկ ենթագլխով հումանիզմի սահմանումների կամ առանցքային հատկանիշների Գր. Ասատրյանի լուսաբանումները, դրանց վերաբերյալ տարբեր փիլիսոփաների մշակած տեսությունները, որոնք թեպետ ունեն որոշակի զանազանություններ, բայց իրենց ամբողջության մեջ գնահատվելու դեպքում չեն դրսևորում աշխարհայացքային էական տարբերություններ: «Հումանիզմ» հասկացությունը կամ եզրույթն այնքան տարողունակ է, որ կարելի է նրա մեջ ներմուծել նոր բաղադրամասեր, քանզի մարդկության զարգացման տարբեր ժամանակահատվածներ իրենց հետ բերում են նոր պրոբլեմներ, որոնց մարդասիրության հենքով լուծումը նոր ձևակերպումներով լրացնել է ստիպում այդ եզրույթի բովանդակությունը: *Ահա այս ընդհանրացմանն է մեզ բերում գրքի հեղինակը: Սրանում ավելի ես համոզվում՝ ընթերցելով աշխատության չորրորդ և հինգերորդ գլուխները, որոնցից առաջինում ներկայացված են հումանիզմի տարատեսակները՝ քննական-վերլուծական մեթոդաբանությամբ, իսկ երկրորդում՝ ժամանակակից սոցիալ - տնտեսական և քաղաքական փոխակերպումների հումանիստական չափումները: Այստեղ խոսքը վերաբերում է մեր օրերում մարդկությանն սպառնացող բազում խնդիրների (բնապահպանական ճգնաժամ, պատերազմներ, գործազրկություն, սոցիալական անհավասարություն և այլն) լուծման համար հումանիստական գաղափարախոսության կամ հումանիզմի մատնանշած ճանապարհներին, որոնք տարաբնույթ են և որպես ելակետ ունեն գլոբալ համերաշխության գաղափարը:*

Գր. Ասատրյանի հեղինակած աշխատությունն առաջինն է և առայժմ միակը, որ իր ամբողջության մեջ ներկայացնում է հումանիստական կամ հումանիզմի փիլիսոփայության ծագումը, պատմությունը և հումանիստական շարժման արդի վիճակը, հումանիստական կազմակերպությունների դիրքորոշումներն այս բարդ և հակասական ժամանակահատվածում:

Վերջում նկատենք, որ այս աշխատության ընթերցումն այնքան է նպաստում ըմբռնելու հումանիզմի փիլիսոփայության ողջ էությունը, որ ակամայից սկսում ես հավատալ հումանիզմի կենսահաստատ անսովոր ներուժին, նրա իրոք պատմական առաքելությանը: Ընդունված է ասել՝ միշտ հաղթում է ճշմարտությունը: Իսկ այնտեղ, ուր դա կատարվում է՝ ուրեմն հաղթում է հումանիզմը՝ բոլոր ճշմարտությունների հիմքը: Մնում է միայն ցավ ապրել, որ այդ հաղթանակը դեռևս չի իրականացվում գլոբալ առումով:

ԱՇՈՏ ՆԵՐՍԻՍՅԱՆ